

- Եւ որք բազմաց հացըս տային՝
Մին պատառոյ ակն ունէին.
Թէպէտև յոյժ ամաչէին,
430 Այլ ի կարեացըն լլբէին.
Թէև մուրալ պատկառէին,
Այլ ի սովոյն յանդգնէին:
Ժիւրեալք ի ցաւս ախտանային
Աւն անդր և աստ մեռանէին.
435 Մանկունքն ի մարսըն նայէին,
Միթէ կենաց հընարս առնէին:
Մարքն ի գլծոյն խորովէին,
Արագ ըզկեանս վճարէին:
Հարքն ի գորով տղայոց լային,
440 Աղիողորմն վայէին,
Ի տեսանելն զոր սընուցին
Դառն կարեաւքն ցաւազին.
Ի մեռանել մանկանց նոցին
Ինքեանք հոգիքն քաղէին:
445 Կիտոց չը կայր ոք որ լային,
Ի՛ ոչ գերեզմանս ճանաչէին.
Եւ այսպիսի ողորմագին
Այս տեսողացն երևէին:
Այս ոչ միայն քրիստոնէից,
450 Այլ ի Տաճիկ ազգաց բնաւին